

ՏԱՐԲԵՐԱԿ 1

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ը:

- 1) անակ-նկալ , -սկսել, ձեռ-նտու
- 2) հայտն-վել, գիրկ-նդիսառն, գործ –նկեր
- 3) ակ-նդետ , ան-նդհատ, լուս-նկա
- 4) առ-նթեր , օր-ստօրե, դաս-նթաց

**0.5 միավոր**

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում իա:

- 1) խավ-ր , օվկ-նոս , քվ-ատուփ
- 2) մում - , բամ- , Արաքս-
- 3) Սոֆ-, քիմ- , Եղ - գարյան
- 4) հեք – թ , վայրկ –ն, փաս – ն

**0.5 միավոր**

3. Ո՞ր շարքի բոլոր բարերն են պատկանում գրքային բառապաշարին:

1. արեգակ , ավետաբեր , բերանքսիվայր
2. անբեկանել , քեֆ , կոհակ
3. պատգամել , իելառ, ապսպրել
4. լուրթ , երախտագիտություն, իրիկնամուտ

**0.5 միավոր**

4. Ո՞ր բառն է բազմիմաստ :

- |            |            |         |              |
|------------|------------|---------|--------------|
| 1. հացաման | 2. ոսկերիչ | 3. ոսկի | 3. Ոսկեգույն |
|------------|------------|---------|--------------|

**0.5 միավոր**

5. Ո՞ր բառակապակցության մեջ չկա փոխաբերաբար գործածված բառ:

- 1) սուր լեզու    2) սուր խուսք    3) սուր գործիք    4. սուր լսողություն

**0.5 միավոր**

6. Սյունակներից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր հոմանիշ բառերը:

- |            |            |
|------------|------------|
| 1. վայրագ  | 1. ագահ    |
| 2. ազնիվ   | 2. դաժան   |
| 3. չքնաղ   | 3. արդար   |
| 4. դժխուհի | 4. թագուհի |
| 5. խնդրել  | 5. աղերսել |

**0.5 միավոր**

7. Ո՞ր շարքի բառազույգերը հականիշներ են:

- 1) հեռու- մոտիկ ,    զղջալ- ապաշխարել
- 2) փչակ - խոռոչ ,    շտապել – դանդաղել
- 3) ջնջել – սրբել ,    բաժանել- անջատել
- 4) սուր – բուր ,    ընդարձակ - անձուկ

**1 միավոր**

8. Ընդգծված բառերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից մեկով:

1) Արի ասպետը, հեծած իր հրեղեն ձիուն, սլանում էր անտառի արահետով:

2) Մեզ մոտ արի՛ւ, փոքրիկ հրաշք: / ե՛կ , խիզախ /

0.5 միավոր

9. Ո՞ր բառը համանուն չունի:

1. Հաց 2. Հարկ 3. Խնամի 4. Սուր

0.5 միավոր

10. Համապատասխանեցրու՛ դարձվածքը և նրա իմաստը: 1 միավոր

1. ականջը տանել	1. իմաց տալ, տեղեկացնել	_____
2. ականջը գցել	2. ձանձրացնել	_____
3. գենքերը վայր դնել	3. չափից դուրս գովել	_____
4. երկինք բարձրացնել	4. հանձնվել, պարտվել	_____

11. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

/0.5 միավոր /

1) թևաթափ լինել - թևերը թափտալ 3) լեզու գտնել – համաձայնել

2) հոգի տալ – նվիրված լինել 4) Աստծու գառ - հնազանդ

12. Բառամասերը միացնելով՝ բառեր կազմիր:

/1 միավոր/

Կյանք + ժպիտ , ծով + գնացող , բազուկ + աթոռ , վերք + կապել , լույս + ամփոփել

13. Ո՞վ է <<Անձրև>> պատմվածքի հեղինակը:

/ 0.5 միավոր/

1. Ս. Խանգաղյան 2. Ս. Զորյան 3. Վ. Անանյան 4. Շ. Ազնավուր

14. Ո՞ր ստեղծագործությունից է, և ո՞վ է հեղինակը:

/ 1 միավոր /

<<Հաճախ վազելվազ հասնում էր բժիշկը , մինչ մայրս լաց էր լինում, նա զարմացած կանգնում էր ջղակծկումներով ցնցվող մարմնիս առաջ>>:

15\*. Տրված իմաստների դիմաց գրի՛ր համանուն բառը:

/1 միավոր/

1/ \_\_\_\_\_ – թանկագին քար

\_\_\_\_\_ – անիվ

2. \_\_\_\_\_ – հեղինակություն

\_\_\_\_\_ – բանկի տրամադրած գումար

3. \_\_\_\_\_ – ամուսնու քույրը

\_\_\_\_\_ – ինչ-որ բան հանձնելը

4. \_\_\_\_\_ – երաժշտական գործիք

\_\_\_\_\_ – զծագրական իր

Տարբերակ 2

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ք:

0.5 միավոր

- 1) մր-ահյուր , դիր-որոշում , վար-աբեկել
- 2) վար-ագիծ , սար-ավորում , պա-սիմաստ
- 3) Սար-իս , ս-ավոր , կար-ապահ
- 4) ձեռ- , հան-ափոր , մանրու-

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում մ:

0.5 միավոր

- 1) ա-բիոն , ա-բարձիչ , ա-բարտակ
- 2) ա-պայման , ա-բասիր , ա-փոփել
- 3) բ-բուլ , հա-բերել , ա-փորձ
- 4) թ-բուկ , ա-բարեխիղճ , ռու-բ

3. Ո՞ր շարքի բոլոր պատկանում խոսակցական բառապաշարին:

0.5 միավոր

- 1) գավաթ , արևաշող , էնքան
- 2) երգահան , էգուց , մարզպան
- 3) ջղայնանալ , ախր , շշմել
- 4) խարտյաշ , մեջ ընկնել , տաքգլուխ

4. Ո՞ր բառը բազմիմաստ չէ:

0.5 միավոր

- 1) հասնել 2) ափ 3) գիծ 4) լեզու

5. Ո՞ր բառակապակցության մեջ կա փոխաբերաբար գործածված բառ: 0.5 միավոր

- 1) լուսավոր սենյակ 3) լուսավոր մարդ 2) ծաղկած դեղձենի 4) ծաղկուն պարտեզ

6. Սյունակներից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր հոմանիշ բառերը:

1 միավոր

- |            |             |       |
|------------|-------------|-------|
| 1. դրացի   | 1. աղերսել  | _____ |
| 2. խրթին   | 2. ծավի     | _____ |
| 3. լուրթ   | 3. հարևան   | _____ |
| 4. խնդրել  | 4. բարդ     | _____ |
| 5. հրճվանք | 5. բերկրանք | _____ |

7. Ո՞ր շարքի բառազույգերն են հականիշներ:

0.5 միավոր

- |                       |                   |                             |
|-----------------------|-------------------|-----------------------------|
| 1. աշխույժ – կայտառ , | գոհ- դժգոհ        | 3. ազնիվ- նենգ, գազաթ-կատար |
| 2. ծույլ- ջանասեր ,   | արդարամիտ- երկչոտ | 4. բիրտ-բարի, ընչաքաղց-ազահ |

8. Ընդգծված բառերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից մեկով: 0.5 միավ.

- 1) Միքայելն իր հողակտորը վարել է նոր տեխնիկայով:

2) Մինասյանը շատ պաշտոններ է վարել: (հերկել , գլխավորել)

9.Ո՞ր բառը համանուն չունի :

**0.5միավոր**

1. մկան 2. գատիկ 3. բագուկ 4.աթոռ

10.Համապատասխանեցրո՛ւ դարձվածքը և նրա իմաստը:

**1միավոր**

- |                        |                    |       |
|------------------------|--------------------|-------|
| 1) Աշխարհով մեկ լինել  | 1)Անմիջապես        | _____ |
| 2)Աչքը դեռ չթարթած     | 2) Ցնծալ,ուրախանալ | _____ |
| 3) Գլխին կարկուտ թափել | 3)Մեկին պաշտպանել  | _____ |
| 4) Թիկունքին կանգնել   | 4)Հանդիմանել       | _____ |
| 5) Լեզվին տալ          | 5)Շաղակրատել       | _____ |

11. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

**0.5միավոր**

- |                                    |                            |
|------------------------------------|----------------------------|
| 1. քար կտրել – ընդարմանալ          | 3. Ցանցը գցել – ձուկ բռնել |
| 2.փորձված աչք- լավն ու վատը իմացող | 4.ջուր ծեծել- դատարկաբանել |

12. Կազմի՛ր բառեր՝ բառամասերը միացնելով:

**1միավոր**

Ձու + ուտող , գիրք+պահարան , փիղ +ոսկոր , ձյուն+ ծաղիկ, ամիս +թիվ:

13.Ո՞ր ռեժիսորի անունով է կոչվում „Հայֆիլմ,, կինոստուդիան:

**0.5միավոր**

1. Շառլ Ազնավուր, 2. Ստ. Զորյան 3. Նաիրի Զարյան 4.Համո Բեկնազարյան

14.Ո՞ր ստեղծագործությունից է և ո՞վ է հեղինակը:

**1միավոր**

<<Այս բոլորը հիշելով՝ Եփրեմ պապը հանկարծ զգաց հնձած խոտի հոտ և բերանը բանալով՝ խոր շունչ քաշեց >>:

15\*. Տրված իմաստների դիմաց գրի՛ր համանուն բառերը:

**1միավոր**

- 1)\_\_\_\_\_ - Քրիստոսի հարության տոնը  
\_\_\_\_\_ - միջատի տեսակ
- 2)\_\_\_\_\_ - թագավոր, տիրակալ  
\_\_\_\_\_ - օգուտ
- 3)\_\_\_\_\_ - գնդաձև մարմին  
\_\_\_\_\_ - գորամիավորում
4. \_\_\_\_\_ - որսի շուն  
\_\_\_\_\_ - ոչ հաստ

Տարբերակ 3

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում թ:

0.5 միավոր

- 1) անդա-ար, Ալվար-, մի-ք
- 2) հադոր-ում , քր-մնջյուն , հաշման-ամ
- 3) կր-օջախ, գաղ-օջախ, հայ-այ-ել
- 4) շքեր-, հանդար-որեն ,խայ-ալ

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ո:

- 1) բա-բա- , հե-թապահ , թ-ջել
- 2) շու- ումու- , վագ- , ա-յուծ
- 3) ապա-աժ, կա-չել, կա-ապան
- 4) կա- ծիք , ա-ծաթագործ , ա-աջին

0.5 միավոր

3. Ո՞ր շարքի բոլոր բառերն են պատկանում գրքային բառապաշարին: 0.5 միավ.

- 1) արևահամ , չքնաղ , խոխոջյուն
- 2. արքայազն, պռոշ, երգահան
- 3. Մտամուր, շշմել, սենեկապետ
- 4. Էգուց, ալարել, աշտե

4. Ո՞ր բառն է բազմիմաստ:

0.5 միավոր

- 1) բաժակաճառ 2) անձրև 3) երես 4) ծիծաղ

5. Ո՞ր բառակապակցության մեջ չկա փոխաբերաբար գործածված բառ: 0.5 միավոր

- 1. լուռ երեխա 2. ծանր խոսք 3. անհանգիստ ծով 5. մռայլ օր

6. Սյունակներից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր հոմանիշ բառերը: 1 միավոր

- |               |            |       |
|---------------|------------|-------|
| 1. անդուլ     | 1. պայքար  | _____ |
| 2 մաքառում    | 2. թախծոտ  | _____ |
| 3. շավիղ      | 3. անդադար | _____ |
| 4. լաբիրինթոս | 4. կածան   | _____ |
| 5. տխուր      | 5. բավիղ   | _____ |

7. Ո՞ր շարքի բառազույգերն են հականիշներ:

0.5 միավոր

- 1. կարճահասակ – գաճաճ , մտերիմ- հարազատ
- 2. Պատիվ – վարկ , ծնունդ -մահ
- 3. Մթնշաղ- աղջամուղջ , հերկել- վարել
- 5. Մեծատուն - աղքատ , ոգևորել- հիասթափեցնել

8. Ընդգծված բառերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից մեկով:

- 1) Ծերունու թոռը լցվում էր մանր ձկներով:

2) Պապն ու թռռը դանդաղ քայլում էին անտառ տանող արահետով: (ուռկան , թռռնիկ) **0.5 միավոր**

9. Ո՞ր բառը համանուն չունի: **0.5 միավոր**

1. Կաթ 2. Սեր 3. Փող 4. խնամի

10. Համապատասխանեցրու՝ դարձվածքը և նրա իմաստը: **1 միավոր**

- |                              |                                |
|------------------------------|--------------------------------|
| 1. աչքի անցկացնել            | 1. հաղորդել, հայտնել _____     |
| 2. մինչև արյան վերջին կաթիլը | 2. ապստամբել, ըմբոստանալ _____ |
| 3. Հոգին հանել               | 3. խոշտանգել, չարչարել _____   |
| 4. Ոտքի ելնել                | 4. մինչև մահ _____             |
| 5. Ականջը զցել               | 5. Թեթևակի ծանոթանալ _____     |

11. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված: **0.5 միավոր**

- |                                  |                              |
|----------------------------------|------------------------------|
| 1. Քարեր շարժել- մեծ գործեր անել | 3. Աստղը խավարել – օրը մթնել |
| 2. երկինք հանել –մեծարել         | 4. Լույս տեսնել - տպագրվել   |

12. Կազմի՛ր բառեր՝ միացնելով բառամասերը: **1 միավոր**

Անտառ + պահել , մանր + հատիկ , քաղցր + հնչյուն , ուղի + գրություն , ծաղիկ + վաճառ

13. Ո՞վ է գրել „ Հոր գոջումբ ,, պատմվածքը: **0.5 միավոր**

- |                      |                 |
|----------------------|-----------------|
| 1. Լիվինգսթոն Լարնետ | 3. Ս. Խանգաղյան |
| 2. Հր .Մաթևոսյան     | 4. Հ Շիրազ      |

14. Նշի՛ր ստեղծագործությունը և հեղինակը: **1 միավոր**

<<ՌԻ շալը կապել են մորս մեջքից, ինձ խանձարուրով զցել մեջը , ձեռնափայտը ձեռքը տվել>> :

15.\* Տրված իմաստների դիմաց գրի՛ր համանուն բառերը: **1 միավոր**

- 1) \_\_\_\_\_ - հարսի և փեսայի հարազատները  
\_\_\_\_\_ - հոգ տանի
- 2) \_\_\_\_\_ - ոչխարի խումբ  
\_\_\_\_\_ - բուրմունք
- 3) \_\_\_\_\_ \_դեղ , սպեղանի , ճար  
\_\_\_\_\_ - չոր խոտ
4. \_\_\_\_\_ - ամիս  
\_\_\_\_\_ - կռիվ, պայքար

## ՏԱՐԲԵՐԱԿ 4

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում խ:

0.5 միավոր

- 1) տա-տակ , բա-տակից , ու- տագնաց
- 2) ու-տապան ,ա- տորոշել , ա-տոտ
- 3) դրա- տ , մա-թանք , ծ)ա-կազարդ
- 4) ու – արկել , բքախե -դ, հա –թել

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ո:

0.5 միավոր

1. – կալիստ , - լեյբոլ , մթն- լորտ
2. – ղկույզ , մեղմ – բեն , մ-մակալ
3. – բմիզդուխտ , միջ - բե , հ – տնկայս
4. հզ -բ , տ ն- բեն , աղ –թք

3. Ո՞ր շարքի բոլոր բառերն են պատկանում խոսակցական բառապաշարին:

0.5 միավոր

- 1) արքայական, բերանքսիվայր , մեջ ընկնել
- 2) սենեկապետ, սուրհանդակ , ախպեր
- 3) նվնվոց , քեֆ , տզզալ
- 4) տխուրայցա , ողկույզ , սաղարթախիտ

4. Ո՞ր բառն է բազմիմաստ :

0.5 միավոր

- 1) մաթեմատիկա 2) լեզու 3) ավազան 4) այգեկուրծ

5. Ո՞ր բառակապակցության մեջ փոխաբերաբար գործածված բառ կա: 0.5 միավոր

ա. Հզոր ձայն բ. հզոր երկիր գ. հզոր պայթյուն դ. հզոր բախում

6. Սյունակներից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր հոմանիշ բառերը: 1 միավոր

- 1) կապույտ 1) երկմտել \_\_\_\_\_
- 2) տարակուսել 2) այծյամ \_\_\_\_\_
- 3) եղնիկ 3) լաջվարդ \_\_\_\_\_
- 5) վտարել 5) արտաքսել \_\_\_\_\_

7. Ո՞ր շարքի բառազույգերը հականիշներ են:

0.5 միավոր

1. հարավ - հյուսիս , շախմատ - ճատրակ
2. սզալ - ողբալ, փառաբանել – նվաստացնել
3. Ազնիվ - խարդախ , գունատ – գունեղ
4. Կեղծ - շինծու , հրճվել - վհատվել

8. Ընդգծված բառերը փոխարինի՛ր փակագծերում տրված բառերից մեկով:

- 1) Նկարիչը նկարում էր ծովի **ափը**:
- 2) Երբ փոքրիկը բացեց **ափը**, մայրը տեսավ փոքրիկ գունդը: / եզերք, բուռը /

**0.5միավոր**

9. Ո՞ր բառը համանուն չունի: **0.5միավոր**

1. խնամի      2. սրի      3. դուռ      4.անարգել

10. Համապատասխանեցրու՝ դարձվածքը և նրա իմաստը: **1միավոր**

- |                          |                              |
|--------------------------|------------------------------|
| 1. կրակն ընկնել          | 1. հետ քաշվել _____          |
| 2. ձեռքերը լվանալ        | 2. փորձանքի մեջ ընկնել _____ |
| 3. հիացմունքից քար կտրել | 3. դյուրովել _____           |
| 4. թևաթափ լինել          | 4. կռահել, հասկանալ _____    |
| 5. Մատը կծել             | 5. հուսահատվել _____         |

11. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված: **0.5միավոր**

- 1) լեզու հանել - լեզուն ստուգել
- 2) խելքը գնալ - հմայվել
- 3) անբան Հուռի - անբան
- 4) հոգին ավանդել – մահանալ
- 5) ոտքի ելնել - ապստամբել

12. Բառամասերը միացնելով՝ բառեր կազմի՛ր: **1միավոր**

Բարի + կիրթ , մանուկ + պարտեզ , ծաղիկ+ վաճառ , ինձ + ուղտ , քարի + հանք

13. Ո՞ր ստեղծագործության հեղինակն է Վահան Թորոպենցը: **0.5միավոր**

- |                               |                        |
|-------------------------------|------------------------|
| 1. << Մի կյանքի պատմություն>> | 3. <<Հորս հիշատակին >> |
| 2. << Գրառումներ իմ կյանքից>> | 4. <<Անձրև>>           |

14. Նշի՛ր ստեղծագործությունը և հեղինակը: **1միավոր**

<<Ահա նստած ես տան դեմ ու կանաչած թթենին

Դեմքիդ ստվեր է զցել.....>>: \_\_\_\_\_

15.\* Տրված իմաստների դիմաց գրի՛ր համանուն բառերը: **1միավոր**

- 1/ \_\_\_\_\_ - եկեղեցի  
\_\_\_\_\_ - /60 րոպե/
2. \_\_\_\_\_ \_ դասաժամ  
\_\_\_\_\_ - հասարակական խումբ
3. \_\_\_\_\_ - զենքի տեսակ  
\_\_\_\_\_ - հատու, ոչ բուր
4. \_\_\_\_\_ - ջրային կենդանի  
\_\_\_\_\_ - կետադրական նշան